ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԾՐԱԳԻՐ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Բացատրագիր

Սույն ձեռնարկը նախատեսված է միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների գերմաներեն լեզվի դասավանդման համար: Այն իր մեջ ներառում է.

- սույն բացատրագիրը,
- գերմաներենի դասավանդման առանձնահատկությունները միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում
- միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող հաստատությունների գերմաներենի ծրագիր
- մեթոդական ուղեցույց
- դասի պլան
- դասի պլանավորման նմուշ-օրինակ
- թեստի նմուշ-օրինակ
- գրականության ցանկ

Ծրագրում տեղ գտած թեմատիկան և լեզվական նյութերը ընտրված են այնպես, որ ապահովվեն կրթության շարունակականությունը, ինչպես նաև՝ բավարարեն միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կրթական նպատակներին: Դրանք բավարար հիմք կստեղծեն սովորողների համար կիրառելու լեզուն խոսքային գործունեության տեսակների (լսել, կարդալ, խոսել և գրել) միջոցով: Դրանք նաև թույլ կտան սովորողներին հաղորդակցվել գերմանախոս մասնագետների հետ՝ հնարավորինս ներկայացնելով իրենց, իրենց մասնագիտությունը, մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները և ստանալ իրենց հետաքրքրող տեղեկատվությունը խոսակցից:

Այսօր գերմաներեն լեզվի դասավանդման կարևոր նպատակներից մեկն այն է, որ ուսանողը կարողանա կարդալ և հասկանալ իր մասնագիտությանը վերաբերող գրականություն, և այն կիրառել գործնականում, գրել գործնական գրություններ, բանավոր հաղորդակցվել:

Սույն ծրագիրը և մեթոդական ուղեցույցը նախատեսված է միջին մասնագիտական կրթության բնագավառում աշխատող դասախոսների համար՝ մշակելու գերմաներենի օրացուցաթեմատիկ պլանը՝ նախատեսված 72 ժամի համար:

Գերմաներենի դասավանդման առանձնահատկությունները միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում օտար լեզվի ուսուցումը միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում նպատակաուղղված է բազային գիտելիքների կիրառման և հաղորդակցական կարողությունների զարգացմանը, որը հնարավորություն է տալիս ուսանողներին շփվելու իրենց հավասար գործընկերների հետ, կատարել մտքերի փոխանակում մասնագիտական հարցերի շուրջ: Հաղորդակցական կարողությունները (ունկնդրել, խոսել, կարդալ և գրել) ծառայում են նաև որպես միջոց՝ գիտելիքների տարբեր բնագավառներից տեղեկություններ քաղելու համար:

Գերմաներենով շփվելու, ինչպես նաև հաղորդակցական մասնագիտական որոշակի խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ է յուրացնել տարաբնույթ և տվյալ մասնագիտական դաշտին բնորոշ խոսքային նմուշներ, երկխոսություններ և մենախոսություններ: Մասնագիտական կրթության բնագավառում գերմաներենի ուսուցումը զուգակցվում է մասնագիտական բառապաշարի ուսուցմամբ՝ յուրաքանչյուր թեմայի վերջում ըստ դասավանդողի հայեցողության ընտրելով համապատասխան տեքստ, երկխոսություն կամ իրադրային խոսքային նմուշներ: Այս մոտեցումը լրացուցիչ հետաքրքրություն կառաջացնի լեզուն ուսումնասիրելու համար, քանի որ այն առավել նպատակաուղղված բնույթ ունի և նպաստում է մասնագիտական գիտելիքների ու կարողությունների զարգացմանը: Մասնագիտական գերմաներենի ուսուցումը կազմված է 3 բաղկացուցիչ մասերից.

- լեզու, որը ներառում է քերականական կառուցվածքներ, բառապաշար, խոսքային նմուշներ,
- ուսումնառություն, որը ենթադրում է միջանձնային փոխհարաբերություններ, ուսումնառության տարբեր ոճեր,
- ուսուցման ինտերակտիվ և համագործակցային մեթոդներ:

Գերմաներենի ուսուցումը պետք է սկսվի գիտելիքների յուրացումից, առանձին խոսքային գործողությունների մշակումից մինչև խոսքային ամբողջական գործունեություն ինչպես առօրյա, այնպես էլ մասնագիտական թեմաներով քննարկումների, բանավեճերի:

Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող հաստատությունների գերմաներենի ծրագիր

Ծրագրի ավարտին սովորողը կունենա ստորև նշված գիտելիքներն ու կարողությունները

1. Գիտելիքների համակարգ

Ուղղախոսություն, ուղղագրություն,

- Կարողանա հնչյունագրության օգնությամբ ճիշտ կարդալ նոր, անծանոթ բառերը,
- իմանա յուրացրած բառապաշարի ճիշտ արտասանության և նախադասությունների տրամաբանական շեշտադրման կանոնները և դերը:

Քերականություն

- Իմանա քերականական հիմնական կանոնները:

Բառապաշար

- Ունենա հաղորդակցության համար անհրաժեշտ բառապաշար՝ 1000 միավոր, որից 500-ը լինի մասնագիտական բառապաշարային միավոր, ինչպես նաև՝ լեզվակիր երկրի մշակույթն արտացոլող բառապաշար,
- կարողանա օգտագործել երկլեզու բառարաններ,
- ունենա բավականաչափ բառապաշար առօրյա կյանքի տարբեր իրադրություններում և մասնագիտական դաշտում հաղորդակցվելու և տեքստերն ընկալելու համար:

Գերմանիային և գերմանախոս երկրների մշակույթին վերաբերող գիտելիքներ

- իմանա էական տեղեկություններ ուսումնասիրվող լեզվի երկրի մասին,
- իմանա աշխարհագրական հիմնական տվյալներ,
- իմանա ուսումնասիրվող լեզվի պատմության, մշակույթի ականավոր դեմքերի մասին,
- իմանա էական տեղեկություններ իր մասնագիտության, այդ բնագավառում հայտնի մարդկանց մասին:

Կարողություններ և հմտություններ

Ունկնդրել/լսել

Անհրաժեշտ է սովորողների մոտ զարգացնել ընկալելու երեք տիպի հմտություններ.

- Հիմնական իմաստի ընկալում,
- Անհրաժեշտ տեղեկատվության առանձնացում,
- Լիակատար ընկալում (մանրամասների ընկալում):

Ինչպես նաև՝

- o լսելով հնարավորինս կռահի անծանոթ բառերի իմաստները՝ համեմատական անցկացնելով մայրենի կամ այլ օտար լեզվի նմանության միջև,
- o լսելով առանձնացնի իրեն համար անհրաժեշտ տեղեկատվությունը,
- o լսելով բանավոր, տեսագրված և կամ ձայնագրված տեքստը՝ կարողանա առանձնացնել գլխավոր միտքը:

Խոսել

Սովորողը պետք է կարողանա.

- o որոշակի ծանոթ և ոչ բարդ իրավիճակներում կազմել մի քանի պարզ, բայց ճիշտ ու կապակցված նախադասություն,
- o նախապես պատրաստվածության դեպքում արտահայտել կուռ, կապակցված և ճիշտ կազմած խոսք (5-10 նախադասություն),
- o լսածն ու տեսածը պատմելիս տարբերակել գլխավորը՝ երկրորդականից,
- o վարել փոքրիկ երկխոսություն-հարցազրույց՝ (կարճ և պարզ կազմված նախադասություններով) հնարավորինս պահելով խոսքային վարքի կանոնները,
- o հեռախոսային զրույց վարել՝ օգտագործելով կայուն բառակապակցություններ, լեզվական միջոցներ և ռեպլիկներ,
- o կարճ պարզ երկխոսություն վարել մասնագիտական թեմաներով՝ օգտագործելով մասնագիտական բառապաշար:

Ընթերցել

Անհրաժեշտ է սովորողների մոտ ձևավորել ընթերցանության երեք տիպի հմտություններ:

- Հիմնական բովանդակության ընկալում
- Անհրաժեշտ տեղեկատվության առանձնացում
- Լրիվ ընկալում

ինչպես նաև՝

Կարողանա.

- ճիշտ արտասանությամբ կարդալ ցանկացած նոր և անծանոթ բառ, առանձին նախադասություններ, հատվածներ,
- բառարանի օգնությամբ կարդալ և հասկանալ ոչ շատ բարդ մակարդակի գեղարվեստական ադապտացված գրականություն,
- կարդա և հասկանա պարզ և ոչ շատ ծավալուն նամակներ,
- կարդա և հասկանա մասնագիտական տեքստեր, նամակներ, գրություններ, սարքավորումների տեխնիկական անձնագրեր:

Գրել

Սովորողը պետք է կարողանա.

- գրել համառոտ ինքնակենսագրություն (CV)՝ ընդգրկելով տեղեկություններ քաղաքացիության, սեռի, հետաքրքրությունների մասին,
- գրել տարբեր բնույթի նամակներ՝ (սովորական, էլեկտրոնային) ոճական ճիշտ դրսևորումներով,
- նկարագրել որևէ անձ կամ երևույթ,
- կազմել մասնագիտական պարզ գրություն՝ արտահայտելով սեփական կարծիքը,
- գրել գործնական գրություններ, դիմում, հայց, հայտ ,երաշխավորագիր և այլն:

Միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող հաստատությունների գերմաներենի թեմատիկ պլանավորում

NN	Թեմա	Կարողություններ և հմտություններ	Ժամ
1.	Ընտանիք և անձնական հարաբերություններ • տեսք և անհատականություն • ծնողներ և երեխաներ • ընտանիք և ընկերներ	Ունկնդրել. կարողանա • հասկանալ թեմային համապատասխան մենախոսությունների, երկխոսությունների, հարցազրույցների, կարճ տեքստերի հիմնական բովանդակությունը, անհրաժեշտ տեղեկատվությունը • հասկանա խոսողի վերաբերմունքը ներկայացվող տեղեկատվության վերաբերյալ Ընթերցել. կարողանա • հասկանալ տեքստերի հիմնական բովանդակությունը • առանձնացնել իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը • կարդալ և հասկանալ տեքստի առանձին հատվածների միջև եղած իմաստային կապը խոսել. կարողանա • խոսել ընտանիքի անդամների, նրանց բնավորության գծերի, տանը ունեցած պարտականությունների մասին • խոսել ընկերների, նրանց նախասիրությունների մասին,	6

		բնութագրել, համեմատել • խոսել սեփական և հարցնել խոսակցի ծրագրերի մասին **գրել.** **կարողանա** • կարողանա մի քանի նախադասությամբ պատմել ընտանիքի, ընկերների և հարազատների մասին • կարողանա նկարագրել մարդկանց, բնութագրել, համեմատել	
2.	**Կրթություն և մասնագիտություն** o ցանկալի մասնագիտություններ o մասնագիտության ընտրություն o աշխատատեղի փնտրում o ինքնակենսագրություն	**Ունկնդրել.** **կարողանա** • հասկանալ մասնագիտությունների վերաբերող տեքստերի հիմնական բովանդակությունը, հարցազրույցների, հայտարարությունների անհրաժեշտ տեղեկատվությունը • ունկնդրած տեքստերում հասկանալ և առանձնացնել գործող անձանց անունները, գործողության ժամանակը, տեղն ու վայրը **Ընթերցել.** **կարողանա** • հասկանալ մասնագիտություններին վերաբերող անծանոթ տեքստերի ընդհանուր բովանդակությունը և ներկայացնել հիմնական տեղեկատվությունը **խոսել.** **կարողանա**	8

		• կարողանա մի քանի նախադասությամբ խոսել իր մասնագիտության մասին • համեմատել • որոշում կայացնել **գրել.** **կարողանա** • գրել համառոտ տեքստ նախասիրությունների և մասնագիտության վերաբերյալ • ինքնակենսագրություն • դիմում	
3	**Առօրյա և սնունդ** o պայմանավորվածություն o հրավերք o խնջույքների կազմակերպում o բաղադրատոմսեր o ինչ՞ են ուտում գերմանացիները հաճույքով	**Ունկնդրել.** **կարողանա** • հասկանալ թեմային համապատասխան զրույցների, կարճ տեքստերի հիմնական բովանդակությունը, դուրս բերել իրեն հետաքրքրող տեղեկատվությունը **Ընթերցել.** **կարողանա** • կարդալ առօրյային վերաբերող տեքստեր և հասկանա հիմնական բովանդակությունը • հասկանալ բաղադրատոմսերի բովանդակությունը **խոսել**	6

		կարողանա • ներկայցնել սիրված ուտեստի բաղադրատոմսը • նկարագրել գերմանացիների խոհանոցը • վարել երկխոսություններ այդ թեմաներով **գրել.** **կարողանա** • գրել հրավիրատոմս • կազմել ճաշացանկ • գրել կապակցված տեքստ՝ նկարագրելով մարդկանց առօրյան	
4.	**Ազատ ժամանակ և սպորտ** o սպորտաձևեր o նախասիրություններ o մարմին և առողջություն	**Ունկնդրել.** **կարողանա** • հասկանալ թեմային համապատասխան զրույցների, կարճ տեքստերի հիմնական բովանդակությունը • առանձնացնել անհրաժեշտ տեղեկատվությունը և մանրամասնությունները **Ընթերցել.** **կարողանա** • կարդալ սպորտին և նախասիրություններին վերաբերող տեքստեր և հասկանալ հիմնական բովանդակությունը • առանձնացնել իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը **խոսել**	**4**

		կարողանա • խոսել ճաշակի և նախասիրությունների մասին • խոսել ամառային և ձմեռային սպորտաձևերի մասին • ներկայացնել սիրած սպորտաձևը և մարզիկին **գրել.** **կարողանա** • նկարագրել իր նախասիրությունները • նկարագրել որևէ մարզիկի և մարզաձև	
5.	**Բնություն և շրջակա միջավայր** o Եղանակ o բնության պահպանություն	**Ունկնդրել.** **կարողանա** • հասկանալ թեմային համապատասխան զրույցների, կարճ տեքստերի հիմնական բովանդակությունը, դուրս բերել իրեն հետաքրքրող տեղեկատվությունը **Ընթերցել.** **կարողանա** • կարդալ բնությանը և եղանակին վերաբերող տեքստեր և հասկանալ հիմնական բովանդակությունը • փնտրել և գտնել անհրաժեշտ տեղեկատվություններ բնության պահպանության վերաբերյալ **խոսել** **կարողանա**	**4**

		• խոսել եղանակի մասին • նկարագրել եղանակը • խոսել բնության պահպանության և դրա անհրաժեշտության մասին **գրել.** **կարողանա** • գրել կապակցված տեքստ՝ նկարագրելով եղանակը և բնության պահպանությունը	
6.	**Գնումներ** o հարմարավետ գնումներ o զգեստ o մթերք o բնակարանի գնում, վարձակալում o գովազդ	**Ունկնդրել.** **կարողանա** • հասկանալ թեմային համապատասխան կարճ տեքստերի, մենախոսությունների, երկխոսությունների, հարցազրույցների հիմնական բովանդակությունը, բնակարանների առք և վաճառքի հետ կապված հայտարարությունների, գովազդների բովանդակությունը **Ընթերցել.** **կարողանա** • կարդալ և հասկանալ գնումների, շենքային վարձակալությանը վերաբերող կարճ տեքստեր • հասկանալ գովազդների և հայտարարությունների հիմնական բովանդակությունը և մանրամասները **խոսել**	6

		կարողանա • վարել երկխոսություններ տրված թեմաների շուրջ • խոսել հարմարավետ գնումների մասին • խոսել նորաձևության մասին • մի քանի նախադասությամբ ներկայացնել շենքի վարձակալմանը, գնմանը վերաբերող տեղեկություն **գրել.** **կարողանա** • մի քանի նախադասության սահմաններում նկարագրել բնակարանը, նորաձևության նմուշը • գրել գովազդ • գրել աշարժ գույքի վաճառքի և վարձակալության հայտարարություն	
7.	**Գերմանիա և գերմանախոս երկրներ** o համառոտ աշխարհագրական և պատմական տեղեկություններ o տեսարժան վայրեր	**Ուինկնդրել.** **կարողանա** • հասկանալ Գերմանիայի և գերմանախոս երկրներին վերաբերող կարճ տեքստեր, երկխոսություններ • առանձնացնել աշխարագրական և պատմական տեղեկատվությունը	**6**

	o տվյալ մասնագիտությունը Գերմանիայում o մշակույթ o հանրաճանաչ մարդիկ	**Ընթերցել.** **կարողանա** • հասկանալ թեմային վերաբերող կարճ տեքստերի բովանդակությունը՝ մշակույթի առանձնահատկությունները, պատմական և աշխարհագրական տեղեկությունները • առանձնացնել անհրաժեշտ տեղեկատվությունը **խոսել** **կարողանա** • վարել երկխոսություն վերը նշված թեմաներով, ներկայացնել գերմանախոս երկրները • խոսել սովորույթների և ավանդույթների մասին • ներկայացնել հանրաճանաչ մարդկանց **գրել.** **կարողանա** • գրել կապակցված տեքստ՝ նկարագրելով հանրաճանաչ մարդկանց, սովորույթներ, վայրեր	
8.	**Հայաստան** o համառոտ աշխարհագրական և պատմական տեղեկություններ o տեսարժան վայրեր	**Ունկնդրել.** **կարողանա** • հասկանալ Հայաստանին վերաբերող կարճ տեքստեր, երկխոսություններ • առանձնացնել աշխարագրական և պատմական	**6**

	o կրթական համակարգ	տեղեկատվությունը **Ընթերցել.** **կարողանա** • հասկանալ թեմային վերաբերող կարճ տեքստերի բովանդակությունը՝ մշակույթի առանձնահատկությունները, պատմական և աշխարհագրական տեղեկությունները • առանձնացնել անհրաժեշտ տեղեկատվությունը **խոսել** **կարողանա** • վարել երկխոսություն վերը նշված թեմաներով, ներկայացնել Հայաստանը • խոսել սովորույթների և ավանդույթների մասին • ներկայացնել հանրաճանաչ մարդկանց **գրել.** **կարողանա** • գրել կապակցված տեքստ՝ նկարագրելով հանրաճանաչ մարդկանց, սովորույթներ, վայրեր	
9	**Տոներ և արձակուրդներ** o ազգային տոներ o ավանդույթներ և սովորույթներ o ճանապարհորդություն	**Ունկնդրել.** **կարողանա** • հասկանալ թեմային վերաբերվող կարճ տեքստեր • առանձնացնել ազգային տոներին, ավանդույթներին,	6

	o տրանսպորտային միջոցներ	սովորույթներին վերաբերվող տեղեկատվությունը **Ընթերցել.** **կարողանա** • հասկանալ տրանսպորտային միջոցների, հայտարարությունների, չվացուցակների հիմնական բովանդակությունը • ազգային տոներին վերաբերվող կարճ տեքստեր, պարզ, հանրամատչելի նյութեր • առանձնացնել անհրաժեշտ տեղեկատվությունը **խոսել** **կարողանա** • ներկայացնել որևէ ազգային տոն • համեմատել • վարել երկխոսություն տրանսպորտային միջոցների և ճանապարհորդության վերաբերյալ **գրել.** **կարողանա** • գրել կապակցված տեքստ՝ ազգային տոների և ճանապարհորդության վերաբերյալ /5-7/ նախադասության սահմաններում	
10	**Ձանգվածային լրատվական միջոցներ**	**Ունկնդրել.** **կարողանա**	**6**

	o հեռուստատեսություն o ռադիո o համակարգիչ, ինտերնետ o թերթեր, ամսագրեր, գրքեր	• հասկանալ երկխոսություններ համկարգչի, ինտերնետի, հեռուստատեսության, այլ լրատվամիջոցների վերաբերյալ • առանձնացնել գլխավոր տեղեկատվությունը երկրորդականից **Ընթերցել.** **կարողանա** • հասկանալ թերթերի, ամսագրերի կարճ տեքստերի բովանդակությունը • ինտրնետում կարդալ և հասկանալ պարզ նամակներ **խոսել** **կարողանա** • մի քանի նախադասության սահմաններում ներկայացնել իր նախընտրած հեռուստածրագիրը • խոսել նախընտրած ամսագրի, թերթի և գրքի մասին **գրել.** **կարողանա** • գրել կապակցված տեքստ՝ նկարագրելով որևէ լրատվամիջոց / ռադիո, թերթ, ամսագիր, հեռուստատեսություն	
11	**Ժամանակակից երիտասարդություն** o ազատ ժամանակի տնօրինում	**Ուինկնդրել.** **կարողանա** • հասկանալ թեմային և ենթաթեմաներին համապատասխան կարճ	**4**

	o երաժշտություն,դիսկոտեկներ o կինո, թատրոն	տեքստերի, երկխոսությունների, հարցազրույցների հիմնական բովանդակությունը • առանձնացնել անհրաժեշտ տեղեկատվությունը **Ընթերցել.** **կարողանա** • հասկանալ երաժշտության, կինոյին, թատրոնին վերաբերող կարճ տեքստերի բովանդակությունը **խոսել** **կարողանա** • վարել երկխոսություն վերը նշված թեմաներով • ներկայացնել իր մտքերը ժամանակակից երիտասարդության, նրա խնդիրների, ազատ ժամանակի տնօրինման մասին **գրել.** **կարողանա** • նկարագրել իր նախընտրած դիսկոտեկը կամ ակումբը	
12	**Մասնագիտական բառապաշարի հարստացում**	Որոշում է ուսումնական հաստատությունը՝ յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխան	**10**

Ծրագրի մեթոդական ուղեցույց

Այս ծրագիրը նպատակ ունի համապատասխան թեմաների օգնությամբ ուսանողների համար հնարավորություն ստեղծել զարգացնելու գրավոր և բանավոր խոսքը: Ծրագիրը կազմելիս նկատի է առնվել, որ ուսանողը պետք է սովորի և կիրառի լեզուն որպես հաղորդակցման և տեղեկատվություն ստանալու միջոց: Ծրագրում ընդգրկված է 12 թեմա 62 ժամի համար, մնացած 10-ը հատկացված է մասնագիտական բառապաշարի հարստացմանը: Թեմաների ընտրության ժամանակ հաշվի են առնվել ուսանողների մինչև այժմ ձեռք բերած գիտելիքները, նրանց տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունները:

Գերմաներենի դասն ավելի արդյունավետ և գործնական դարձնելու նպատակով անհրաժեշտ է աշխատանքներ տանել հետևյալ կարողությունների և հմտությունների զարգացման ուղղությամբ.

- ունկնդրում,
- բանավոր հաղորդակցում (խոսել),
- ընթերցանություն,
- գրավոր խոսք:

Բանավոր հաղորդակցումը խոսքային գործունեության կարևոր տեսակներից մեկն է: Սովորողները պետք է կարողանան հասկանալ առօրյա իրադրությունները և ակտիվ մասնակցել առօրյա թեմաների շուրջ երկխոսություններին:

Բանավոր հաղորդակցման ձևերից մեկը մենախոսությունն է: Մենախոսությունը նկարագրություն է, հաղորդում լսածի կամ կարդացածի մասին, վերաբերմունք հաղորդվող տեղեկության նկատմամբ: Մենախոսության ձևակերպումը ստեղծագործական աշխատանք է. այն վարելու կարողություններն ու հմտությունները ձևավորվում են նախ բառային, ապա խոսքային վարժությունների կատարմամբ: Այս վարժություններն ունեն հաղորդակցական ուղղվածություն, նրանց նպատակն օտար լեզուն որպես հաղորդակցման միջոց օգտագործելն է: Բանավոր հաղորդակցման մյուս ձևը երկխոսությունն է: Երկխոսության նպատակն է ուսանողներին սովորեցնել համապատասխան թեմայի շուրջ զրույց վարել: Երկխոսության ուսուցման մեջ մեծ նշանակություն ունի դերային խաղը:

Ունկնդրելը դիտարկվում է որպես գերմաներենի ուսուցման նպատակներից մեկը: Այն ենթադրում է մի շարք հիմնական կարողությունների սարգացում. ընկալել և հասկանալ ունկնդրած տեքստի հիմնական բովանդակությունը, դուրս բերել իրեն

անհրաժեշտ կամ հետաքրքրող տեղեկատվությունը, հասկանալ և ամբողջապես ըմբռնել բովանդակության մանրամասները:

Գրելը որպես խոսքային գործունեության ինքնուրույն տեսակ՝ մտքերի գրավոր ձևակերպումն ու արտահայտումն է:

Գրավոր աշխատանքը նպատակ ունի ամրապնդելու կամ ստուգելու արդեն ուսումնասիրված նյութը: Սա նշանակում է, որ գրավոր աշխատանքները պետք է լինեն ոչ թե պատահական, այլ խիստ նպատակային և թեմատիկ:

Ընթերցանությունը, որպես խոսքային գործունեության տեսակ, ունի իր հաղորդակցական խնդիրը. այն տեղեկատվություն ստանալու աղբյուր է և ենթադրում է առնվազն մի շարք հիմնական կարողություններ :

- *Հիմնական բովանդակության ընկալում*: Կարելի է օգտագործել կարճ պատմվածքներ, հատվածներ ադապտացված գեղարվեստական գրականությունից, կարճ տեքստեր, մատչելի հոդվածներ թերթերից և ամսագրերից, հայտարարություններ, գովազդային հոլովակներ, ճանապարհորդական ուղեցույցներ:
- *Անհրաժեշտ տեղեկատվության առանձնացում:* Կարելի է օգտագործել հոդվածներ թերթերից և ամսագրերից, հայտարարություններ, գովազդներ, ճանապարհորդական ուղեցույցներ:
- *Լրիվ ընկալում:* Կարելի է օգտագործել հատվածներ գեղարվեստական գրականությունից, հոդվածներ թերթերից և ամսագրերից, գիտահանրամատչելի տեքստեր:

Լեզվական կարողությունները ձևավորվում են հնչունաբանության, բառապաշարի և քերականության զարգացման օգնությամբ: Հնչյունաբանության նպատակն արտասանական հմտությունների ձևավորումն է: Արտասանական հմտությունները խոսելու, ունկնդրելու և ընթերցանության մաս են կազմում: Գրավոր և բանավոր խոսքը զարգացնելու համար սովորողները պետք է տիրապետեն արտասանական հմտություններին:

Բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրը տեքստն է: Բառապաշարի ներմուծմանն ու ընդարձակմանն է ծառայում երկրագիտական գիտելիքների հաղորդումը:

Քերականությունը դիտարկվում է որպես միջոց ճիշտ հաղորդակցումն ապահովելու համար:

Ստորև տրվում է անհրաժեշտ քերականական նյութ, որին սակայն առանձին դասաժամ չի նախատեսված:

Քերականական նյութը	ուսուցման/ուսումնառության նպատակը
1. Das Substantiv: Die Deklination der Substantive, die SonderfՊlle.Գոյականի ուժեղ, թույլ, իգական հոլովումներ, հոլովման հատուկ խումբ: Pluralbildung der Substantive: /կրկնողություն/Singulariatantum,Pluraliatantum. Գոյականի հոգնակի թիվը. միայն եզակի և միայն հոգնակի թվով օգտագործվող գոյականներ;	Կարողանալ տարբերակել գոյականի հոլովը և հոլովումը,գրավոր և բանավոր խոսքում կարողանալ կիրառել գոյականը անհրաժեշտ հոլովում: Ճիշտ օգտագործել գոյականը հոգնակի թվում:
2. Gebrauch des Artikels.Հոդի կիրառման բոլոր դեպքերը:	Կարողանալ խոսքում կիրառել որոշյալ և անորոշ հոդը, գոյականը կիրառել առանց հոդի:
3. Das Adjektiv. Steigerungsstufen der Adjektive.Die Deklination der Adjektive.հեմատության աստիճանները / նաև բացառությունները/;Ածականի հոլովումը և հոլովման բոլոր դեպքերը:	Իմանալ և խոսքի տարբեր ձևերում կարողանալ կիրառել ածականը ճիշտ հոլովով , կարողանալ համեմատություն կատարել և օգտագործել համեմատության աստիճանը ճիշտ հոլովով:
4.Das Adverb.Մակբայեր / հատկապես ձևի, ժամանակի , տեղի, չափ ու քանակի/.	Տարբերակել ժամանակ, ձև, տեղ ցույց տվող մակբայերը, կարողանալ դրանք կիրառել նախադասության մեջ:
5. Das Pronomen.Դերանուն: Հարաբերական դերանուններ: Անդրադարձ sich դերանունը,նրա տեղը նախադասության մեջ:	Կարողանալ ընտրել և խոսքում/ բարդ նախադասության մեջ / կիրառել համապատասխան հարաբերական և հարցական դերանունը;Կարողանալ ճիշտ հոլովում և նախադասության մեջ ճիշտ տեղում օգտագործել անդրադարձ դերանունը:
6. Das Verb.Infinitiv I,II . Partizip I,II , Alle Zeitformen des Passivs. Բայի անվանական ձևերը,ենթակայական և հարակատար դերբայներ: Կրկնել սահմանական եղանակի բոլոր ժամանակաձևերը/ նաև կրավորական սեռի ներկա և անցյալ ձևերը/: Կրավորական սեռի անցյալ և ապառնի ժամանակաձևերի կազմությունը: Եղանակավորող բայեր /նաև lassen,wissen/ Infinitiv PrՊsens Passiv mit Modalverben. Konjunktiv (hՊtte,wՊre ձևերը) Rektion derVerben.	Կարողանալ տարբերակել և ճիշտ օգտագործել սահմանական եղանակի բոլոր ժամանակաձևերը,տարբերակել և ճիշտ կիրառել եղանակավորող բայերը և նրանցով կառուցվածքները,Կարողանալ ճանաչել և օգտագործել կրավորական սեռի ժամանակաձևերը, դիմավոր և անդեմ ձևերը, ճանաչել և օգտագործել բայերը ըղձական եղանակով: Բանավոր և գրավոր խոսքում կիրառել դերբայական դարձվածները, բայերի խնդրառությունը:
7. Die ZahlwՓrter Թվականներ.	Կարողանալ կիրառել քանակական, դասական թվականները, կոտորակները:

Die Syntax Շարահյուսություն. 1. Բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ: Satzreihe und Satzgefƀge. Որոշիչ երկրորդական նախադասություն: Attributsatz. Պայմանի պարագա երկրորդական նախադասություն /նաև անիրական/: Bedingungsatz. Հետևանքի պարագա երկրորդական նախադասություն:Konsekutivsatz. Նպատակի պարագա երկրորդական նախադասություն:Finalsatz. 2. Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք; Direkte und indirekte Rede.	Իմանալ, կարողանալ տարբերակել և կիրառել բարդ և երկրորդական նախադասությունները, ընտրել համապատասխան շաղկապը: Կարողանալ կատարել ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքի փոխակերպում:

Ուսուցման մեթոդներ և նրանց ընտրությունը

Ուսուցման մեթոդն իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ի՞նչ սովորեցնել(բովանդակությունը), ի՞նչի համար սովորեցնել (նպատակներ) և ի՞նչպես սովորեցնել(մեթոդիկա): Կրթության բովանդակությունը և նպատակները իրականացնելու համար անհրաժեշտ են մեթոդներ; Իսկ ի՞նչ է մեթոդը;

Ուսուցման մեթոդը հունարեն բառ է, որը նշանակում է ինչ-որ տեղ, ինչ-որ բանի տանող ճանապարհ, ուղի: Բազմաթիվ նկարագրությունների մեջ մեթոդը բնութագրվում է որպես նպատակին հասնելու միջոց : Ուսումնական գործընթացը հաջող իրականացնելու համար դասավանդողին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Մեթոդների ընտրության և կիրառության համար կան մի շարք գործոններ: Դրանք են.

- **ուսուցման նպատակները և խնդիրները**
- **բովանդակությունը,**
- **ուսումնական նյութի ծավալը (քանակը) և բարդությունը,**
- **սովորողների շահագրգռվածությունը,**
- **սովորողների տարիքն ու աշխատունակությունը,**
- **ուսումնական ժամաքանակը,**
- **ուսուցման նյութատեխնիկական ու կազմակերպական պայմանները,**
- **նախորդ դասերին կիրառվող մեթոդները,**
- **ուսումնական պարապմունքների տիպը և կառուցվածքը,**
- **դասավանդող-սովորող հարաբերությունները,**
- **սովորողների թվաքանակը դասարանում,**
- **դասավանդողի պատրաստվածության մակարդակը:**

Ուսուցման գործընթացը պետք է իր մեջ ներառի տարբեր մեթոդներ: Այսօր ուսումնական մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ավանդական և նոր կամ ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության(գիտելիքի) պարզ փոխանցում սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցնան ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդները ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Տերմինը կարելի է պարզաբանել հետևյալ կերպ. «inter»-փոխադարձ, «act»-գործողություն: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի հետ: Ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Ինտերակտիվ մեթոդի առանձնահատկություններն են.

- սովորողը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի
- սովորողի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար
- սովորողը ձեռք է բերում համագործակցային, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցման կարողություններ
- նյութի յուրացման ընթացքում սովորողը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել և կիրառել սովորածը
- ստեղծվում է ինքնակրթության միջավայր

Մեթոդները ըստ ուսուցման գործընթացի կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա/ մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի խթանման փուլում.

բ/ մեթոդներ,որոնք հարմար են կիրառել դասի իմաստի ընկալման փուլում.

գ/ մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի կշռադատման փուլում.

ԽԹԱՆՈՒՄ-ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ-ԿՇՌԱԴԱՏՈՒՄ (ԽԻԿ) ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՂ ՀԱՄԱԼԻՐ ՄԻՋՈՑ

Ն կ ա ր ագ ր ու թ յ ու ն ը և ն պ ա տ ա կ ը

ԽԻԿ համակարգը երեք փուլից կազմված ուսուցման կազմակերպման ռազմավարություն է: ԽԻԿ անվանումը եռափուլ համակարգի /խթանում-իմաստի ընկալում-կշռադատում/ փուլերի անվանումների հապավումն է: Այն կիրառվում է ոչ միայն նյութը մատուցելիս, այլև մինչև նյութը հաղորդելը և հաղորդելուց հետո:
ԽԻԿ համակարգը իր բնույթով կիրառելի է ցանկացած լսարանի հետ աշխատելիս, երբ նոր նյութ է հաղորդվում: Այն կիրառելի է տարիքային բոլոր խմբերի սովորողների հետ՝ աշխատանքում:

Այս համակարգում ուսուցման կազմակերպումը նպաստում է սովորողի քննադատական մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ անելու ունակության, ստեղծագործական մտածողության զարգացմանը:
Խթնաումը ԽԻԿ համակարգի առաջին փուլն է, որի նպատակն է խմբային քննարկման միջոցով պարզել /վեր հանել/ սովորողների ունեցած գիտելիքները նոր ներկայացվող նյութի վերաբերյալ: Այն կարելի է իրականացնել, օրինակ, մտքերի տարափի օգնությամբ, որտեղ դասավանդողի դերը պատասխանները ուղղորդելն է և դրանց գրանցելը:

Խթանման փուլը հետապնդում է երեք հիմնական նպատակ.

- բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները,
- ակտիվացնել սովորողներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ,
- սովորողների մեջ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում, շահագրգռվածություն:

Իմաստի ընկալումը եռափուլ համակարգի երկրորդ աստիճանն է: Այս փուլում հաղորդվում է նոր նյութը, տեղեկատվությունը կամ գաղափարը: Այն կարող է իրականացվել բազմազան ձևերով /տեքստը պատմելու, ցուցադրելու, կարդալու միջոցով նյութը մատուցելու և այլն/:

Այս փուլում ևս կարևորվում է դասավանդողի նվազագույն ազդեցությունը սովորելու գործընթացի վրա, միաժամանակ խրախուսվում է, հետաքրքրությունը պահպանելու նպատակով, ուսուցման որոշակի մեթոդների կիրառումը: Օրինակ՝ տեքստը կարդալու ժամանակ փոխգործուն նշանների համակարգի օգտագործումը՝ «V»-ես սա գիտեմ, «-» իմ իմացածին հակասում է, «+» նոր տեղեկատվություն է, «?» անհասկանալի է, շփոթեցնում է, «!» հետաքրքիր է, կարելի է քննարկել:

Իմաստի ընկալման փուլի նպատակներն են՝

- սովորողի մոտ հետաքրքրության աստիճանի պահպանումը,
- տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը,
- նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Կշռադատումը ԽԻԿ համակարգի երրորդ փուլն է, որը հաճախ դասավանդման ընթացքում անտեսվում է դասավանդողների կողմից: Կշռադատման փուլում սովորողը յուրացնում է նոր տեղեկատվությունը՝ հարմարեցնելով իր ունեցած գիտելիքներին: Փաստորեն սովորողի մոտ տեղի է ունենում իմացական կառույցի վերաձևավորում: Այս փուլում ևս դասավանդողի դերը նվազագույն է՝ հիմնականում ուղղորդող, հուշող, կարգավորող բնույթի: Այս փուլին նպաստող տարբեր մեթոդների օգտագործումն օգնում է, որպեսզի սովորողն ինքը՝

- հանրագումարի բերի իր գիտելիքները,
- յուրացնի նոր գիտելիքներ՝ դրանք դարձնելով իր սեփականությունը,
- վերակառուցի իր ունեցած նախկին գիտելիքները նոր ձեռք բերած տեղեկատվության հիման վրա:

Կշռադատման փուլում պետք է իրականացվեն հետևյալ նպատակները. սովորողը նոր ստացած տեղեկատվությունն արտահայտի իր բառերով և ձևակերպումներով, սովորողների հետ ծավալել նոր նյութի վերաբերյալ քննարկում՝ հնարավոր դարձնելով նույն գաղափարը տալ ձևակերպումներով կամ այլ մոտեցումներով, նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացիա:

Կշռադատման փուլում ևս կարելի է կիրառել բազմաթիվ մեթոդներ, մասնավորապես կարելի է կազմել փոխգործուն նշանների պատասխաններին բավարարող աղյուսակ կամ գրել շարադրություն նոր գաղափարների շուրջ, կազմակերպել նույն թմային վերաբերվող նկարների «ցուցահանդես», դասակարգում, պրիզմա, Վենի դիագրամ և այլն:

ԽԻԿ համակարգը երկմակարդակ ուսուցում է այն առումով, որ հիմնավոր գիտելիք ստանալու համար ոչ միայն պետք է սովորել նյութի բուն բովանդակությունը, այլև դրա յուրացնելու ճանապարհը: Երկմակարդակ ուսուցումը ավելի պատկերավոր կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



ԽԻԿ համակարգը ուսուցման կազմակերպման համակարգված մոտեցման հնարավորություն է ընձեռում, այն ապահովում է համադրված ակտիվ գործընթաց, սեփական տեսակետը պաշտպանելու պատասխանատվություն: Այն նպաստում է

հանդուրժողականության ձևավորմանը, սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը, մտքերն ազատ արտահայտելու հմտության զարգացմանը, լսելու կարողության զարգացմանը:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի խթանման փուլում.

1. Մտագրոհ
2. Խմբավորում
3. Պրիզմա
4. Մտածիր-զույգ կազմիր-քննարկիր
5. Ձնագնդի /ձնակույտ/

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում.

1. T-աձև աղյուսակ
2. Հասկացությունների /գաղափարների/ քարտեղագրում
3. Վենի դիագրամ
4. Փոխգործուն նշանների համակարգ
5. Համառոտ դասախոսություն
6. Ձրույց
7. Խճանկար
8. Շրջագայություն պատկերասրահում
9. Երեք բանալի և մի կողպեք
10. Կարուսել

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի կշռադատման փուլում.

1. Քառաբաժան
2. T -աձև աղյուսակ
3. Խորանարդում
4. Հասկացությունների քարտեզագրում:

Շրջագայություն պատկերասրահում

Ընդհանուր նկարագրությունը

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև

զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Ընթացքը.

1. Դասավանդողն ուսումնական նյութը կամ առաջադրանքը բաժանում է 4-6 մասի և յուրաքանչյուր խմբին տալիս դրանցից մեկը՝ ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից: Այդ դեպքում նյութի նույն մասը կուսումնասիրի երկու խումբ:
2. Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են տրված մասի վրա (ցանկալի է, որ առաջադրանքի կատարման տարբեր մոտեցումներ առաջարկվեն) և ստեղծում նկար, կոլաժ, աղյուսակ, դիագրամ և այլն:
3. Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին՝ ստեղծելով պատկերասրահ:
4. Խմբերի ներսում սովորողները հաշվում են մինչև 4-ը և կազմում չորս նոր խումբ՝ ըստ իրենց համարների (դասարանի բոլոր ,1 համարները մի խումբ, 2–ները ուրիշ խումբ և այլն):
5. Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, ով մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը, մանրամասն ներկայացնում է աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն կատարում լրացումներ կամ ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին:
6. Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը:

ՊՐԻԶՄԱ

Պրիզմայի մեթոդն ուսուցման և ուսումնառության ակտիվ մեթոդ է: Այն խրախուսում է սովորողներին ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող երևույթի, հասկացության, գաղափարի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է: Պրիզմայի մեթոդը գծագրական դասակարգչի ձև ունի, այն մտածողության ընթացքը դարձնում է ակնառու ու պատկերավոր:

Պրիզմա մեթոդը կիրառվում է բացառապես դասի սկզբնական, խթանման փուլում՝ ապահովելով սովորողների ակտիվությունն ու հետաքրքրությունը, ակտիվացնելով, կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների ու պատկերացումների և ուսուցանվող նոր նյութի միջև: Սրանով իսկ մեթոդի կիրառումն ապահովում է դասի հաջող մեկնարկ: Պրիզմա կարելի է կազմել նաև անհատապես, բայց առավել արդյունավետ են խմբային աշխատանքի արդյունքները: Պրիզմաե մեթոդի ներառումը շատ ժամանակ չի խլում, անցնում է շատ արագ և աշխույժ:

Մեթոդի նպատակները.

1. նպաստել առաջադրված նյութը տարբեր կողմերից ուսումնասիրելուն՝ անդրադառնալով թեմային առնչվող տարբեր ոլորտներին,
2. նույն նյութի մասին տարբեր աղբյուրներ ուսումնասիրելու հնարավորություն ընձեռել,
3. ընկերների հետ համագործակցելով՝ օգնել գտնել առաջադրված հարցերի պատասխանները,
4. սովորեցնել տեղեկատվությունը մշակել և հաղորդել պատասխանատվությամբ, որպես որոշակի թեմայի կամ նյութի այս կամ այն հատվածի փորձագետ,
5. հնարավորություն ստեղծել դառնալու միաժամանակ և՛ սովորող, և՛ սովորեցնող, նոր նյութը յուրացնել արդեն դասարանում:

Ընթացքը.

- Տրվում է մեկնաբառը, այն հիմնական հասկացությունը, միտքը, թեման, ինչը ենթակա է ուսումնասիրության:
- Սխեմայի հաջորդ երկու վանդակներում առանց քննարկման գրանցվում են մեկնաբառի ազդեցությամբ մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը: Հարկ է նշել նաև, որ խմբային աշխատանքի ժամանակ գրանցվում են առաջինը հնչած բառերը: Պետք է հետևել, որ հնարավորինս կանխվեն գիտակցական մակարդակում ծնված բառերի ու հասկացությունների գրանցումը և խրախուսվեն ենթագիտակցական ոլորտում ծնված ասոցիատիվ կապերը:
- Ասոցիատիվ մտածողության վրա հիմնվող այս ընթացքը շարունակվում է մինչև վերջ: Առավել արդյունավետ է երեք շերտով բացված պրիզման (ինչպես տրված է օրինակում), որից հետո պրիզման սկսվում է փակվել: Այս անգամ վանդակները լրացվում են նախորդ երկու բառերի ասոցիատիվ կապը հաշվի

առնելով:

- Պրիզման եզրափակվում է վերջնաբառով (եթե դա չի տրված):
- Պրիզմայի ամփոփիչ քայլը մեկնաբառի ու վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է, որը պետք է իր արտացոլումը գտնի մեկ նախադասության կամ մտքի մեջ, վերջիններիս կարելի է անդրադառնալ հետագայում՝ նյութի ամփոփման ժամանակ:
- Այսպիսով, եթե պրիզմայի կառուցման ամբողջ ընթացքում ակտիվանում է ենթագիտակցական ոլորտը, ապա վերջին քայլում, մեկնաբառն ու սկզբնաբառը մեկ մտքի կամ նախադասության մեջ կապելիս, ակտիվանում է գիտակցական ոլորտը:

Ստորև բերված է վերոհիշյալ քայլերով կատարված մի օրինակ: Նույն «կրթություն» մեկնաբառով կարող է ստացվել պրիզմայի ամենատարբեր և բազմաթիվ տարբերակներ:



Փոխգործուն գրառումների համակարգ (ՓԳՀԱԿՄՀ)

Իմաստի ընկալման փուլի արդյունավետ մեթոդական հնար է, որն օգնում է սովորողին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը:

Այս մեթոդի էությունն այն է, որ կարդալիս արվում է փոխգործուն գրառումներ հետևյալ նշաններով

V - գիտեմ,

- - իմ իմացածին հակասում է,

+ - նոր տեղեկություն է,

? - անհասկանալի է,

! - հետաքրքիր է, կարելի է քննարկել:

Ընդհանուր առմամբ այս գրառումներն արտացոլում են տեքստի հետ սովորողի հարաբերությունները: Կարդալու ընթացքում արված նշումները ծառայում են որպես հարմար տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտ բերելու համար:

Ընթերցումից ստացված տեղեկատվությունը դասակարգելու համար սովորողները կազմում են կատարած նշումների իրենց անհատական աղյուսակը հետևյալ ձևով.

V	-	+	?	!

Վենի դիագրամ

Վենի դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով:


առանձնահատկություն
առանձնահատկություն
ընդհանրություն

Դիագրամը կարող է ունենալ ինչպես պարզ կառուցվածք (երկու հասկացության համար), այնպես էլ՝ բարդ (երեք-չորս հասկացությունների համեմատության համար):



ՆՊԱՏԱԿԸ

* Մասնակիցների կարծիքների փոխանակում, ընտրություն, հավաքում և խմբի գաղափարների (կարծիքների) կազմում:

* Փոքր (2-4 հոգանոց) խմբերով աշխատանքի առավելության ցուցադրում:

ԸՆԹԱՑՔԸ

1. Ուսուցիչն սովորողներին ներկայացնում է որևէ պատմություն, առաջադրանք կամ կոմիքս:

2. Անհատական աշխատանք, ի՞նչ միտք է ծագում առաջին հերթին: Գրեք ձեր գաղափարների (կարծիքների) ցանկը այս պատմության (առաջադրանքի կամ կոմիքսի) վերաբերյալ (րոպե):

3. Կազմեք զույգեր և իրար ներկայացրեք ձեր անձնական կարծիքները: Ապա միասին ձևակերպեք երկուսիդ համար ընդհանուր 3-5 կարծիք, որոնք վերցված են ձեր անհատական կարծիքների ցանկից: Գրեք դրանք թղթի վրա (6 րոպե):

4. Կազմեք 4 հոգանոց խմբեր: Ներկայացրեք զույգերով կազմած կարծիքները և նորից ձևակերպեք 4 ընդհանուր կարծիքներ ամբողջ խմբի համար: Խումբը գրում է դրանք առանձին թղթի վրա (8 րոպե):

5. Երկուական 4 հոգանոց խմբերը միանում են և կազմում 8 հոգանոց մեծ խմբեր: Խմբերը ներկայացնում են իրենց կարծիքները, պարզում նմանությունները և տարբերությունները: (Ընթացքում նրանք կարող են ավելացնել նաև նոր կարծիքներ): Նորից ձևակերպեք 4 ընդհանուր կարծիք ամբողջ խմբի համար:

6. Խմբերի ձևակերպած բոլոր կարծիքները ներկայացրեք դասարանին:

7. Սովորողների հետ կատարեք անդրադարձ՝ տալով հետևյալ բնույթի հարցեր,

- Ի՞նչ զգացումներ ունեիք մենակ աշխատելիս:
- Ո՞րն էր երկուսով աշխատելու առավելությունը մենակ աշխատելու համեմատ:
- Ո՞ր փուլում էին բոլորը հավասար և ակտիվ մասնակցում:
- Ո՞ր փուլում էր ավելի հեշտ որոշումների կայացումը:
- Արդյո՞ք բոլորը մասնակցեցին քննարկմանը 8 հոգանոց խմբով աշխատելիս:

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնարը յուրաքանչյուր մասնակցին խմբում ներգրավելու եղանակ է: Յուրաքանչյուր անհատ հաշվետու է ստեղծելու, ձևափոխելու, համեմատելու, լսելու և խոսելու:

Միևնույն ժամանակ հետևեք խմբերի դեմ առ դեմ փոխազդեցությանը և, անհրաժեշտության դեպքում, սովորողների ուշադրությունը հրավիրեք դրա վրա հատկապես ութ հոգանոց խմբերում: Աշակերտների համար ակնհայտ է դառնում, որ ամենադժվարը 8 հոգանոց խմբով աշխատելն էր:

ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ (ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՔԱՐՏԵԶ

Հասկացությունների քարտեզը մտքերի և դրանց փոխհարաբերությունների տարածական պատկերումն է:

Այս մեթոդական հնարն օգնում է գիտակցված ձևով սովորել, ընդունել նոր տեղեկատվությունը և տեսողական պատկերի միջոցով ներկայացնել, թե ինչպես են տվյալ ոլորտի գաղափարները փոխկապակցվում:

Հասկացությունների քարտեզներն օգնում են սովորողներին շատ բաներ տարբեր տեսանկյուններից հասկանալ, այսինքն մտածողության տարբեր ձևեր օգտագործել:

Հասկացությունների քարտեզ կազմելու գործընթացն ուսումնառության զորեղ ռազմավարություն է, որը բնույթով գրաֆիկական, գծագրական է և սովորողին ստիպում է մտածել տերմինների, մտքերի ու գաղափարների հարաբերակցության մասին:

Հասկացությունների քարտեզ կազմելու համար անհրաժեշտ է գլխավոր (առանցքային, հիմնական միտքը նշել թղթի մեջտեղում՝ ուղղանկյան ձևով): Այնուհետև կապակցված գաղափարները պետք է գրել կենտրոնական մտքից ճառագայթող ճյուղերին: Բոլոր բառերը, արտահայտությունները գծերով միացնել կենտրոնին կամ ճյուղերին՝ ըստ դրանք միմյանցից կախված լինելու հանգամանքի:

Մտքերի քարտեզագրումը կարելի է համարել մտքերի տարափի մի տարատեսակ: Իրականում դրանք երկուսն էլ նպաստում են նոր նյութի տարբեր մեկնաբանությունների և տեսակետների կուտակմանը: Սակայն տարբերվում են միմյանցից: Այսպես գաղափարի քարտեզագրման դեպքում խառնիխուռ ու պատահական մտքերն ավելի քիչ են լինում, քան մտքերի տարափի ժամանակ: Եթե մտագրոհը քաջալերում, խթանում է խիստ տարամետ կողմնային մտածողությունը, ապա գաղափարի քարտեզագրումն իր կառուցվածքով զարկ է տալիս գաղափարների ներդաշնակեցմանն ու նոր գաղափարների կերտմանը:

Մտագրոհ կամ մտքերի տարափ

Մտագրոհը խմբի անդամների միջև փոխանակման ընթացքում գաղափարների ստեղծման և հարստացման եղանակներից մեկն է: Մինչ դասանյութին անցնելը, դասավանդողը որոշակի ժամանակում անհատական կամ զույգերով կազմել է տալիս իրենց իմացած տեղեկատվությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ:

Այնուհետև բոլոր մտքերը, գաղափարները, գրի է առնվում գրատախտակին: Ամեն միտք, թեկուզ անվստահ և վախվորած՝ խրախուսվում է: Այս մեթոդի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ բացառվում է առաջադրված լուծումների մասին անել որևէ քննադատություն կամ տալ գնահատական:

Յուրաքանչյուր մասնակից ազատ և անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում սխալվելուց, անհավանական, անհեթեթ և հակասական գաղափարները արտահայտելու մտավախություն չի ունենում: Այդպիսի անկաշկանդ մթնոլորտի ստեղծումը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը: Մտքերը, գաղափարները գրատախտակին գրի առնելուց հետո ընթերցում են նոր նյութը, ապա ամբողջ խմբով քննարկվում են առաջադրված գաղափարները, անհրաժեշտության դեպքում լրացնում, եղած անհամաձայնու-թյունները քննարկում, շտկում: Այս մեթոդի հիմնական նպատակը սովորողների ուշադրությունը տվյալ նյութի վրա կենտրոնացնելն է, նոր գաղափարներ «հայտնաբերելն է»: Ճիշտ են հետևյալ ասույթները.

«Չկա ավելի վտանգավոր բան, քան այն միտքը, որը միակն է»:
«Լավ մտահաղացումներ ունենալու լավագույն ձևը շատ մտահաղացումներ ունենալն է»:

Ապագայի անիվ

Դասավանդողը գրատախտակի մեջտեղում գրում է որևէ հրատապ խնդիր և ապա սովորողներին հանձնարարում է մտագրոհի օգնությամբ թվել այդ խնդրի հետևանքները և գրել տրված բառի վերին մասում: Դրանք էլ իրենց հերթին կարող են բաղդատվել: Իսկ բառի ստորին մասում գրում են սովորողների թվարկած այդ խնդրի պատճառները:

Ամփոփելով կարելի է հանձնարարել գրել փոքրիկ շարադրություն, տրված մեթոդի մասին և նրա խնդրի մասին:



Այս մեթոդը շատ արդյունավետ է այնպիսի թեմաներ անցնելիս, որտեղ առկա են խնդիրները և դրանցից բխող հետևանքները, դրանց պատճառները:

ԳՈՒՍ (Գիտեմ – Ուզում եմ սովորել – Սովորել եմ)

ԳՈՒՍ մեթոդը երեք սյունակից բաղկացած մի աղյուսակ է և կարդալու ընթացքում կարող է դառնալ սովորողների ուղեցույցը: Աղյուսակը կարող եք գծել մեծ թղթի վրա, գրատախտակին կամ ցուցադրեք ցուցապաստառի վրա: Այս մեթոդի կիրառումը ներառում է հետևյալ քայլերը.

1. Գլխավոր թեման գրեք ԳՈՒՍ աղյուսակի վերևում: Սովորողներին հարցրեք, թե ինչ գիտեն դասի թեմայի մասին: Նրանց ասածները գրի առեք աղյուսակի առաջին՝ «Գ – Ի՞նչ գիտենք արդեն» սյունակի մեջ:

